ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍԲ. ՍԱՐԳՍԻ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ ԳԱԳՈՒՄ ԵՎ ՈՒՇԻՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆԻ ՍԱՀԱԿՅԱՆ

«Սբ. Սարգիս» կոչված սրբավայրերի տարածման արդի քարտեզը[1] վկայում է, որ միջնադարյան Հայաստանում դրանք իրենց քանակով կարող էին մրցել Սբ. Խաչ (Նշան), Սբ. Գրիգոր, Սբ. Աստվածածին, Սբ. Մինաս, Սբ. Հովհաննես (Կարապետ) սրբավայրերի հետ: Իսկ դա նշանակում է, որ ժողովրդական քրիստոնեության ճնշմամբ հայ եկեղեցին հանդերի, գյուղերի ու թեմական կենտրոնների մակարդակով սրբազօծել ու պաշտոնականացրել է սբ. Սարգսին նվիրված սրբավայրերը:

Ինչպես հայտնի է, սրբավայրի անվանումը մեկ անգամ ընդմիշտ տրված իրողություն չէ, այն դարերի մեջ կարող է փոխվել ուրիշ սրբանվամբ կամ խաղաղ գոյակցել այլ սրբանունների հետ: Սարգսին նվիրված սրբավայրերի մեծ քանակը ցույց է տալիս, որ այն ավելի մեծ աճի միտում է ունեցել միջնադարում, ինչից կարելի է եզրակացնել, որ սրբի հեղինակությունը գնալով աճել է ժողովրդի մեջ: Փորձենք այս դիտարկումն ստուգել հին ու նոր ժամանակների նշանավոր սրբավայրերի՝ Ուշիի Սբ. Սարգսի և Գագի Սբ. Սարգսի օրինակներով:

XI-XIII դդ. հայ-հունական պաշտոնական ու ժողովրդական մակարդակներում լարված դավանաբանական անհանդուրժողական հարաբերություններին զուգահեռ՝ միջեկեղեցական դավանական վեճեր են բորբոքվում նաև հայ-վրացական սահմաններում, մանավանդ հյուսիսային ու հյուսիսարևելյան Հայաստանի վանական ու թեմական կենտրոններում, հայ և վրացի խառը բնակության վայրերում, որտեղ դավանական անհամաձայնության «հրահրիչ» է ներկայանում սբ. Սարգիսը՝ իրեն նախորդող Առաջավորաց պասով: Այստեղ ևս սրբի պաշտամունքն արտահայտվում է նրա անունով սրբավայրերի հիմնումով, որոնցից շատ հայտնի էր Գագի Սբ. Սարգիսը, որի վաղագույն հիշատակներից մեկը պահպանվել է Շարակնոցում[2]:

Գագի Սբ. Սարգիսը հայերին պաշտպանում էր ոչ միայն նրա պասն ուտողներից, այլև օտար ցեղերի թշնամական գերեվարումներից: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է, որ 1235 թ. ինքն իր ու-

[1] Տե՛ս **Հ. Սարգսյան**, Պատմական Հայաստանի սբ. Սարգիս սրբավայրերի տեղաբաշխման որոշ հարցեր, «Սբ. Սարգիս» (գիտաժողովի նյութեր), Եր., «Մուղնի» հրատ., 2002, էջ 103-105 (քարտեզը՝ էջ 121):

[2] Տե՛ս «Ձայնքաղ շարական», Վաղարշապատ, 1888, էջ 86:

սուցիչ Վանական վարդապետի և էլի ուրիշների հետ գերի է տարվել մոնղոլների կողմից, ուսուցիչը փրկագնով ազատագրվել է և խոստացել, որ կգնա Գագա Սբ. Նշանի ոտքը, որ սբ. Սարգսի անունով էր, կխնդրի, և նա Կիրակոսին ու իր ընկերներին էլ կազատի: Ի դեպ, այդ նույն գիշերը Կիրակոսը կարողացավ ընկերների հետ փախչել գերությունից[3]: Պատմիչը չի մոռանում նշել նաև, որ Գագում եղած հրաշագործ խաչի կանգնեցնողը եղել է սբ. Մեսրոպ վարդապետը: Իսկ Մաշտոցն այդ կողմերում այլ սրբավայրերի հետ ևս կապված էր՝ ըստ վանական բանահյուսական ավանդույթի:

Եթե 1235 թ. Սարգիս զորավարի անունով հայտնի Սբ. Նշանը հռչակված էր իբրև գերիների հարեհաս-ազատարար, ուրեմն այն տվյալ գործառույթով հայտնի էր դեռևս նախորդ դարից: Իրոք, Վարդան Արևելցին՝ Կիրակոսի դասընկերն ու հայրենակիցը, իր «Պատմության» մեջ[4] նշում է, որ 1130 և 1161 թվականներին թշնամիները ավարառության ժամանակ փորձել են այրել հռչակավոր խաչը, որը երևի փայտյա էր, բայց պատժվել են սբ. Սարգսի զորությամբ: Եթե անգամ Վարդան պատմիչը ետին թվով այդ հրաշալի պատիժները վերագրեր Գագա սրբին, միևնույնն է, դա նշանակում էր, որ սրբի գոյությունն ու համբավը գալիս են XII դարից: Անկախ այն բանից, թե ով է Գագա բերդի հիմնադիրը, իսկ ինչպես վկայում է Վարդան Արևելցին հավանաբար բանավոր ավանդության հիման վրա, դա Գագիկ թագավորն էր, կարող էր բերդում եղած սրբավայրի շուրջ XI-XII դդ. հյուսվել վանական-բանահյուսական բնույթի մի տեղական ավանդություն՝ կապված Մաշտոցի անվան հետ: Իրականում գավառի և դաշտի անունով լեռը կոչվել է Գագ, ամրոցը՝ Գագա բերդ, որը հետագայում բացատրվել է իբր բերդը կառուցող Գագիկ թագավորի անունով: Արդյունքում Վարդան Արևելցին արձանագրում է. «*Գագ անուանի բերդ և գաւառ Գագկայ թագաւորէն շինեալ* [բերդը և գավառը-Ա.Ս.], *ուր կայ հռչակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին՝ օրհնեալ ի սրբոյն Մեսրոպայ վարդապետէն և թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ և հայի ի դաշտն լայնանիստ եւ երկայնատարած*»[5]:

Ինչ վերաբերում է բուն սրբավայրին ու նրա անվանումին, ապա կարելի է ենթադրել, որ գուցե սկզբնապես այն կոչվել է Սբ. Խաչ կամ Նշան, իսկ հետո՝ սբ. Սարգիս զորավարի պաշտամունքի աճի հետ, խաչը ստացել է նրա անունը, որովհետև, վանական բանահյուսական նոր լեգենդի համաձայն, իբր Մաշտոցը նրա մեջ ամփոփել է սբ. Սարգսի մի ատամը: Այսպես, միայն երկրորդ անուն տալու միջոցով կարելի է

---

[3] Տե՛ս **Կիրակոս Գանձակեցի**, Պատմութիւն Հայոց, աշխատ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961:

[4] Տե՛ս «Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի», Վենետիկ, 1862, էջ 123,127:

[5] Նույն տեղում, էջ 123:

բացատրել Գագա Սբ. Նշան անվան փոխարկումը Գագա Սբ. Սարգսի և ոչ թե մեկնել խաչը հենց հիմնադրումից որևէ սրբի անվան հետ կապելու հայտնի երևույթի միջոցով[6]:

Ինչպես նշում է Վարդան Արևելցին, Գագա բերդում «*կայ սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սբ. Սարգսի*», իսկ դա նշանակում է, որ խաչը հատուկ առանձնացվում է մատուռից, վերջինս, ի դեպ, այսօր էլ գոյություն ունի: Պետք է ենթադրել, որ խաչը և Սբ. Սարգսի մատուռը դեռևս չէին ձուլվել (XII դ.), ուստի և ենթադրելի է նախնական ինքնուրույն Գագա սբ. Նշան, որ կարող էր ի հայտ գալ X-XI դարերում, և որը հավանաբար զուգորդվել է սբ. Սարգսի անվան և մասունքի հետ՝ սկսած XI-XII դարերից: Դա կարող էր լինել սբ. Սարգսի համբավի մեծացման շնորհիվ, երբ սուրբը հայ-վրացական սահմանային գավառում կարող էր պետք գալ հայոց դավանաբանական առանձնահատուկ կողմը պնդելու համար՝ մեկ, սեփական երկրի սահմանները թշնամական հարձակումներից պաշտպանելու և հայերին գերությունից ազատելու համար՝ երկու:

Հետագայում Սբ. Խաչ կամ Նշան անվանումը աստիճանաբար դուրս է մղվում, մնում է միայն Գագա Սբ. Սարգիսը, իսկ ավելի ուշ՝ XIX-XX դդ., ինչպես երևում է տեղի գյուղագիր Հարություն քահանա Ճուղուրյանի վկայությունից և ներկայիս Տավուշի մարզի Կոթի գյուղի բնակիչների պատմածից (Սայադ Պետրոսյան և այլք), մոռացվում է նաև Գագի անունը, մնում է պարզապես Սբ. Սարգիս: Դեռ ավելին, կոթեցիները, ավանդաբար աղոտ պատկերացում ունենալով Գագի բերդի և Գագիկ թագավորի կապի մասին, կարծում են, որ այդ բերդը գտնվում է գյուղից մոտ 7-8 կմ դեպի հարավ-արևելք ընկած մի ուղղաձիգ բլրի վրա, որն անվանում են Գավարզին:

Իրականում Գավարզինը (միջնադարյան Քավազին) ևս ամրոց է ծառայել նույն ժամանակներում, ինչի մասին վկայում են նրա շուրջ եղած պարսպի հետքերը: Կիրակոս Գանձակեցու նկարագրությունից հնարավոր է թեաբար բխեցնել, որ Վանական վարդապետի ճգնարանը եղել է այդ բլրի խոշոր քարայրերից մեկը, որի շուրջ էլ, ի դեպ, հավաքվել է տեղի բնակչությունը մոնղոլների հերթական հարձակումից պատսպարվելու նպատակով: Այստեղից Վանական վարդապետը, Կիրակոս պատմիչի ասելով, ժողովրդի հորդորով իջնում է երկու ուղեկիցներով (Մարկոս և Սոսթենես)՝ մոնղոլների առաջնորդի հետ բանակցելու, որից հետո ցած են կանչում Կիրակոսին և մյուս աշակերտներին, ու բոլորին միասին մոնղոլները գերի են պահում մինչև փրկագին կորզելը, իսկ ժողովրդին ազատ են արձակում:

Հավանաբար այն պատճառով, որ բուն Սբ. Սարգսի գտնվելու վայրի շուրջ անզեն աչքին պարսպի հետքեր չեն երևացել, պահպանվել են

[6] Տե՛ս Հ. Պետրոսյան, Խաչքարերի անվանաբանական համակարգը և սբ. Սարգիս խաչքարերը, «Ս. Սարգիս» (գիտաժողովի նյութեր), Եր., 2002, էջ 77:

միայն Սբ. Սարգիս եկեղեցի-մատուռը և նրանից քիչ հեռու ևս մի ավելի փոքր մատուռ, ինչպես նկարագրում է Հ. Ս. Էփրիկյանը[7], տեղացիները Գագա բերդը նույնացրել են Քավազին (այժմ Գվարզին) բերդի հետ: Ուրարտական սեպագրից հայտնի Կուարզանե երկրանունը Հովի. Կարագյոզյանը նույնացրել է Գավարզինի հետ, ինչը, ճիշտ լինելու դեպքում, տեղանունը կօժտեր պատկառելի հնությամբ՝ կու+արզանե բաղադրիչներով՝ հնդեվրոպական լեզվական հիմքի վրա (կեղտոտ=սև+քար=արձան, լեռ իմաստներով)[8]:

Իսկ ըստ մի գյուղացի տեղեկատուի՝ Գվարզինը կապված է «գավազան» բառի հետ, քանի որ այդ բլուրը տափարակ հիմքից միանգամից ուղղաձիգ ելնում է իբրև գավազան: Կարծում եմ, թե այդ անվանը զուգահեռ՝ բլուրը պատմականորեն կարող էր կոչվել նաև Դիտավան (թեկուզ այն վկայված չէ), որովհետև նրա շրջակա տարածքը՝ այժմյան Աղստևի ջրամբարով հանդերձ, կոչվում է Դիտավան, իսկ թուրքերեն արտասանությամբ՝ Դդեվան: Դրանից է անվանում ստացել նաև Խորհրդային Հայաստանի Իջևանի շրջանի գյուղերից մեկը՝ Դիտավանը (նախկինում՝ թուրք. Ռնազլու): Այժմյան Տավուշի մարզի և Ադրբեջանի կազմում հայտնված Ղազախի շրջանի սահմանը սկսվում է վերոնշյալ Գագա դաշտով: Դաշտը եզերող սարերը՝ Գագա Սբ. Սարգիսը, Մակարավանքը, Գավարզինը, բնական դիտարաններ են, որտեղից երևում են դեպի Կուր ձգվող հարթավայրում կատարվող շարժերը: Ի դեպ, այդ առանձնահատուկ դիրքը նկատել է Վարդան Արևելցին, երբ իր «Պատմության» մեջ գրել է, որ Գագա Սբ. Սարգիսը «*հայի ի դաշտն լայնանիստ և երկայնատարած*», իսկ Վարդան Այգեկցուն վերագրված մի շարականի մեջ նշվում է, որ Սբ. Նշանը կանգնած է. «*Բարձր ի դիտակ ի Գագա գագաթան, // Որով պահպանի քառանկիւն սահման*»[9]:

Մեջբերումը, կարծես, մղում է ենթադրելու, որ Գագ-ը եղել է գագաթ-ից առաջացած բարբառային տարբերակ, որը Գագա բերդ կամ Գագի Սբ. Նշան կապակցություններում ընկալվել է հատուկ անուն, դարձել է լեռնանուն և բերդանուն ու տարածվել ողջ գավառի ու դաշտի վրա: Ուստի պետք է համարել, որ Գագա սբ. Սարգիս անվանումը համահունչ է Պտկի սբ. Գևորգ կամ Բարձրահայաց սբ. Նշան անվանումներին: Սակայն նման ենթադրությունների համար լրացուցիչ փաստեր չկան, եթե չհաշվենք հետագայի հետևյալ օրինակները, ինչպես՝ Գագա դաշտ, գավառ կամ գագացի. «*... եւ ետ նմա* (Արղուն խանը՝ Վրաց Դեմետրէին-Ա.Ս.) *զամենայն աշխարհս Հայոց՝ զտունն Աւագեան, և զտունն Շահանշահեան* (Զաքարյան-Ա.Ս.) *և զԳագեցին* (Վահրամյան-

[7] Տե՛ս «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան», հ. Ա, Վենետիկ, 1903, էջ 443:

[8] Տե՛ս **Հովի. Կարագյոզյան**, Աղստևի հովիտը սեպագիր աղբյուրներում, «Տավուշ» (նյութական և հոգևոր ժառանգություն), Եր., 2009, էջ 129, հմմտ. **Վ. Խաչատրյան**, Մեծ Կուենք գավառը Ուրարտական թագավորության ժամանակներից ի վեր, նույն տեղում, էջ 115: Նաև՝ **Գ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն (նախագրային շրջան), Եր., 1987, էջ 445:

[9] **Մ. Աշճեան**, Սուրբ Սարգիս, «Սուրբ Սարգիս» (գիտաժողովի նյութեր), Եր., 1982 էջ 21:

Ա.Ս.) *և զորդիսն Սադուն Աթաբեկին* (Արծրունի-Ա.Ս.)»[10]: Հայտնի է, որ նոր տեղանունների ստեղծման տեսակետից հաճախ որոշիչ դեր են կատարում սրբավայրերի անվանումները (Սուրմալու, Մարմաշեն և այլն):

Այսպիսով, սրբավայրի պատմության մեջ, ինչպես մի այլ դեպքում՝ խաչամասնիկ, այս դեպքում էլ սբ. Սարգսի մասունք ձեռք բերելը կապվել է Մաշտոցի անվան հետ: Ու թե Մաշտոցը որտեղից է գտել այդ սուրբ մասունքը (ատամը կամ սեղանատամը), կարևոր չէր, որովհետև Մաշտոցի սրբությունն ու հեղինակությունը, երևի, բավական էին սբ. Սարգսի մասունքի ձեռքբերումը հիմնավոր համարելու համար: Սովորաբար որևէ սրբազան առարկայի կամ մասունքի հավաստիությունը հիմնավորելու պատմությունը պետք է հանգի «անառարկելի» սկզբնաղբյուրի, և տվյալ դեպքում եթե սբ. Սարգսի մասունքի տերը և նվիրատուն Մաշտոցը չլիներ, պիտի հարց առաջանար, թե նա որտեղից է ստացել այդ մասունքը: Ահա այս բաց կամ թերի տեղից էլ օգտվել ու «սնվել» է Ուշիի սբ. Սարգսի ավանդությունը:

Կասկած չկա, որ Գագա սբ. Սարգսի հռչակը թնդում էր նաև Արագածոտնում: Եվ XIII դ. Ուշիի Սբ. Աստվածածին[11] եկեղեցու հյուսիսային կողմում եղած հնադարյան մատուռը վերակառուցվում է Սբ. Սարգսի վկայարանի: Հավանաբար տեղացիները մինչև Սբ. Աստվածածնի կառուցումը մատուռին տված են եղել սբ. Սարգիս անվանումը կամ էլ ավանդաբար եկած այդ անունը պահել են նաև նորացված վկայարանի վրա:

Այնուամենայնիվ Սբ. Աստվածածնի վեհաշուք տաճարի կողքին Սբ. Սարգիս վկայարանի վերականգնումը կապված է մի նուրբ հանգամանքի հետ: Դա այն էր, որ Գագա Սբ. Սարգիսը Մաշտոցի շնորհիվ ծաղկում էր, իսկ Ուշիի Սբ. Սարգիսը մնում էր անշուք ու աննշան այն դեպքում, երբ Մաշտոցը, որ թաղված էր հարևան Օշականում, կարող էր ավելի շուտ «մասնավորել» Ուշիին, քան Գագին: Կարծում եմ, որ այդ համեմատումից էլ կարող էր խանդավառվել Ուշի-Կարբի շրջանի վանական-բանահյուսական երևակայությունը, որի պտուղը եղել է Մաշտոցի միջոցով Գագի և Ուշիի սրբությունների միավորումը: Այսինքն՝ հարկավոր էր այսուհետ պատմել, որ Մաշտոցը սբ. Սարգիս վկայի ամբողջ մարմինը բերեց Կարբի և ամփոփեց Ուշիում՝ կառուցելով Սբ. Սարգիս վկայարանը, իսկ մի ատամ նվիրեց Գագին՝ ամփոփելով հատուկ դրա համար իր կանգնեցրած խաչի ակնում: Արդյունքում ստացվում էր, որ Գագի սբ. Սարգսի հրաշագործ մասունքը սերում էր Ուշիից,

---

[10] **Ստ. Օրբելեան**, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 426:

[11] Ի դեպ, Սբ. Աստվածածին անվանումը գործածում ենք պայմանականորեն, քանի որ այն տվյալ եկեղեցուն տրված ենք գտնում ընդամենը XVII դարից: Ուշիի եկեղեցու և նրան կից գավթի պահպանված արձանագրություններում Աստվածածին անունը չի հիշատակվում: Չի բացառվում, որ այն սկզբնապես օծվել է իբրև Սբ. Սարգիս:

ուրեմն՝ ինչքան առավել հրաշագործ է Ուշիի սրբությունը, մանավանդ որ Գագի սրբի ողջ փառքը վերագրվելու էր նաև Ուշիի մայր սրբին:

Ուշի-Գագի միավորյալ սրբության, հետևաբար և սուրբ մասունքների ձեռքբերման ընդհանուր պատմության գրանցումը գտնում ենք բավականին ուշ՝ Գրիգոր Ծերենց Խլաթեցու խմբագրած Հայսմավուրքում (XV դ.). «*… Եւ յետոյ եկեալ մեծ վարդապետն Հայոց սուրբն Մեսրոպ* (Համիան քաղաք-Ա.Ս.) *էբարձ զմարմին սրբոյն Սարգսի եւ տարաւ Կարբի եւ եդ պատուով ի յՈւշի եւ արար զտեղին վանք հռչակաւոր, որ է մինչեւ ցայսօր: Եւ առեալ ատամ մի յատամանց սրբոյն Սարգսի եւ տարեալ ի Վրաց տուն ի դաշտն Գագայ, եդ ի մէջ փայտեայ խաչի և օծեալ զխաչն կանգնեաց ի վերայ բլրին Գագայ, որ կոչի մինչեւ ցայսօր Գագա ս. Սարգիս եւ առնէ մեծամեծ նշանս և սքանչելիս…*»[12]: Սակայն Գր. Խլաթեցուց ավելի քան 130 տարի առաջ՝ 1310 թ., Հովհանավանքում գրված մի ձեռագրի հիշատակարանում գտնում ենք Ուշիի սբ. Սարգսի մասին հայտնի ամենավաղ գրավոր վկայությունը. «*Արդ գրեցաւ սուրբ աւետարանս հրամանաւ և ար[դ]եամբք ամենաւրհնեալ Մամախաթունին և ընծայեցաւ Ուշոյ սուրբ զաւրավարին Սարգսի: Մի ոք իշխեսցէ հանել և հեռացուցանել ի վկայարանէ սուրբ զաւրավարին*»[13]:

Սա նշանակում է, որ XIII դ. II կեսին Արագածոտնում Ուշիի Սբ. Սարգիսը հայտնի էր իբրև Մաշտոցի միջոցով Գագա Սբ. Սարգսի հետ ընդհանուր պատմություն ունեցող սրբավայր, ինչը դեռևս հայտնի չէր գագացիներին:

Եվ իսկապես, Ուշիի Սբ. Աստվածածնի տաճարին զուգահեռ կամ նրանից առաջ վերակառուցվել է նրա հյուսիսային կողմի մատուռը, որի բեմի տակից վերջերս (2000-ական թթ.) կատարված հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են մի բուռ ոսկրափշուրներ, որոնք լցված են եղել բեմատակի հողի մակերեսային շերտում գտնված մի փոսորակում՝ անխնամ, խառնիխուռն վիճակում, առանց մասնատուփի[14]: Արդյո՞ք այդ հողե փոսորակի ոսկրափշուրները կապ ունեն տեղի երկաթեդարյան դամբարանի հետ, թե՞ մի այլ տեղից են վերցվել և զետեղվել բեմի տակ մատուռի հիմնադրման ժամանակ: Իհարկե, մատուռի հիմնարկեքի ժամանակը որոշել Մաշտոցի անվան հետ կապված ավանդության հիման վրա սխալ կլինի, որքան էլ շինվածքը XII-XIII դարերից շատ ավելի հին լինի: Նույն կերպ սխալ կլինի XIII դ. ավանդության հիման վրա մատուռի անունը Սբ. Սարգիս համարելը: Շատ հնարավոր է, որ վաղ ժամանակներում, ասենք VII դ., մատուռը

---

[12] Էջմիածնի ձեռագիր 68, թղ. 284ա, ըստ Մ. արք. Աշճեանի, նշվ. աշխ., էջ 12:

[13] «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան, Եր., 1950, էջ 66: Հմմտ. «Մայր Ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հ. Բ, կազմեցին Օ. Եգանեան, Ա. Զեյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Եր., 2004, էջ 318-319:

[14] Հմմտ. **Ֆ. Բաբայան**, Ուշիի սբ. Սարգսի վանքը, «Սուրբ Սարգիս» (գիտաժողովի նյութեր), Եր., 2002, էջ 59:

հիմնադրվել է այլ սրբի անունով: Համենայն դեպս, եթե այն լիներ Սբ. Սարգսի վկայարան՝ ոչ շինծու մասունքներով, ապա ինչ-որ կերպ հայտնի կլիներ և կհիշատակվեր մինչև XIII դ. և, բացի այդ, չէր կապվի Գագա սբ. Սարգսի հետ ու չէր դառնա Գագի սրբության կեղծ հիմնավորում, իբր Մաշտոցը մարմինը Ուշիում թաղեց, ատամը Գագում դրեց: Այլապես Վարդան Արևելցին կիմանար, որ Գագա սբ. Սարգսի ատամը Մաշտոցը բերել է Ուշիից: Հավանաբար Ուշիի մատուռի այլ սրբանունը կա՛մ մոռացվել է, կա՛մ էլ, իր արդիականությունը կորցնելով, դուրս է մղվել մի ավելի հզոր ու մոդայիկ սրբի կողմից, որպիսին սբ. Սարգիսն էր: Որքան հայտնի է, Հայաստանում տարածված սբ. Սարգիսները մեկը մյուսից անկախ են եղել և ունեցել են ուրույն հիմնավորումներ: Միայն Ուշիի վանական հաստատությունն է, որ սբ. Սարգսի ամբողջ մարմնին տիրանալով՝ իրեն վեր է դասում բոլոր համանուն սրբավայրերից, իսկ միջնադարի հայտնի «մասունքագետ» Գրիգոր Ծերենց Խլաթեցին ստիպված էր պարզապես արձանագրել այդ փաստը Հայսմավուրքում:

Ե՞րբ և ինչո՞ւ էր Արագածոտնում ձևավորվել նման հասարակական կարծիք՝ Ուշիի և Կարբիի վանական բանահյուսական ավանդույթի հիման վրա: Հավանական է այն ժամանակ, երբ XII դ. վերջին քառորդին Վրաստանը հայ-վրաց միացյալ զորքով ազատագրեց Հայաստանը ի դեմս Սարգիս Զաքարյանի և յուր որդիների: Որքան էլ վրաց տիրապետությունը, Զաքարյանների և նրանց տեղացի վասալների մասնակցությամբ, քաղաքականապես հանդուրժելի էր, միևնույնն է, հայոց վանքերում ու վարդապետական շրջանակներում աճում էր մի դավանաբանական ընդդիմություն, որը կոչված էր կանխելու վրաց եկեղեցու հնարավոր «ագրեսիան»: Ահա, հայոց ազգային-դավանաբանական ինքնության պահապան զրահներից մեկն էլ, ինչպես հայ-հունական մշակութային հակամարտության մեջ, սբ. Սարգիսն էր: Ուստի պատահական չէր, որ սարգսապաշտության նոր կենտրոններ էին առաջանում անգամ ավանդական պաշտամունքային վայրերում՝ վերջիններիս փոխարինելով կամ նրանց հետ գոյակցելով: Քանի որ հյուսիսային և հյուսիսարևելյան Հայաստանում վրաց քաղաքական «աստղն» ավելի շուտ էր բարձրացել (XII դարի սկիզբ) սելջուկյան արշավանքներից ավելի թեթև պրծնելու շնորհիվ, հակավրացական դավանաբանական զրահն այնտեղ ավելի շուտ գործարկվեց, և հիմնադրվեց Գագա Սբ. Սարգսի վանքը: Եվ որովհետև վրաց «երկայնաբազուկը» ավելի ուշ հասավ Կենտրոնական Հայաստան, ուշացավ նաև Ուշիի Սբ. Սարգսի հիմնադրումը: Վերոբերյալ մեր դատողության համար իբրև հենարան արժե դիտել XIII դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցու խոսքը, որ վրաց Գեորգի թագավորի և Թամար թագուհու օրոք և հետո *«... վերստին նորոգեցան եկեղեցիք....շինեցան և նոր վանորայք և եկե-*

ղեցիք, որ ի հնոցն չեւ էին լեալ վանք»[15]: Եվ իրոք, Վաչուտյանների իշխանական ծրագրով Ուշիի հին քրիստոնեական սրբավայրը, որ արմատներով հասնում է մինչև հեթանոսական ժամանակները, ոչ միայն վերակառուցվեց, այլև առաջին անգամ վերածվեց Սբ. Սարգիս վանական խոշոր կենտրոնի՝ Սբ. Սարգիս և Սբ. Աստվածածին եկեղեցիներով, հոյակերտ գավիթով, պարսպով և վանականների կացարաններով, որոնք ամբողջովին տեղավորվում են XIII դարի տնտեսական ու քաղաքական մշակութային զարգացման համատեքստում: Չի բացառվում, որ ինչ-որ տեղ սբ. Սարգիս զորավարի անունը նաև Զաքարյաններին հաճոյանալու միջոց է եղել:

Կարելի է կարծել, որ հենց շինարարության տարիներին ձևավորվում էր վանական-բանահյուսական ավանդույթը, որով ամրացվում և հռչակվում էր սբ. Սարգսի նորագույն ներկայությունը Ուշիում: Դեռ ավելին, հենց այդ տարիներին նախապատրաստվում էր, երևի, սբ. Սարգսի մասունքերի ձեռքբերման վարկածը: Ի դեպ, սրան կարող էր մղել նաև Ուշի տեղանվան վարդապետական կեղծ ստուգաբանությունը: Քրիստոնեական գրագետ ու կիրթ հավատացյալների ընկալման մեջ տեղանունը զուգորդվում էր Օշականի հետ՝ ուշ/աւշ արմատով, որն էլ բացատրվում էր իբրև մաս, մասունք, բաժին, ինչպես դա երևում է հոշոտել (մասնատել) կամ օշաքաղություն (մասնաքաղություն) բառերում: Այսինքն, եթե վանական բանահյուսական ավանդույթի կրողը հասկանա, որ «Ուշի վանք» նշանակում է «մասունքի վանք», բնականորեն պիտի հարց հարուցի, թե ո՛ւմ մասունքն է, ո՛ր սրբի վկայարանն է կառուցվել իրենց վանական համայնքում: Իսկ թե ինչ է նշանակում Ուշի տեղանունը, դժվար է ասել, այն պետք է որ շատ հին անուն լինի, եթե նույնական չէ Օշականի արմատի հետ, և եթե ծառանուն չէ, որ նշանակում է գաճաճ կաղնի: Ի դեպ, պեղումներից բացված տաճարի դռներից մեկի գլուխը փակող կարճ գերանը կարող է լինել հենց վերոնշյալ գաճաճ կաղնուց, որը միջնադարում աճել է այդ կողմերում՝ Կարբի, Օշական և այլն: Սովորաբար ծառանունը սրբավայրի վրա հայտնվում է այն պատճառով, որ սկզբնապես այնտեղ դրվել է տվյալ փայտից պատրասված խաչ, կամ նախնական եկեղեցին եղել է փայտեղեն, որից հետո փայտի հետքը վերացել է, բայց անունը մնացել է նախ՝ որպես Ուշի խաչ-Ուշի եկեղեցի, ապա՝ որպես Ուշի:

Բանալի բառեր – *Սբ. Սարգիս, Գագ, Ուշի, հայադավան, վրացադավան, մասունք, սրբանուն, ս. Խաչ, վանական բանահյուսություն*

АРЦРУНИ СААКЯН – *Святилища Сурб Саргис в Гаге и Уши.* – Вопрос о происхождении и названии святилищ рассматривается на примере почитаемых паломниками мест Гаг и Уши. Случается, что христианские святые вовлекаются

[15] **Կ. Գանձակեցի**, նշվ. աշխ., էջ 155:

официальной церковью в сферу межцерковных и политических отношений и получают при этом новые функции и названия, основанные на легендах об обретении святых мощей. Именно так место св. Знамения (Креста) в Гаге занял Сурб Саргис (св. Сергий), ещё в XI-XIII вв. ставший покровителем армянских воинов и пленных с функцией присматривать за армяно-грузинскими конфессиональными взаимоотношениями. А в XIII в. на основе монастырской традиции формируется предание о Сурб Саргисе Уши. В этом предании соответствующее святилище указано в качестве первоначального местоположения святых мощей, фрагмент которых Месроп Маштоц поместил в основание Сурб Саргиса Гаг.

Ключевые слова: *Сурб Саргис, Гаг, Уши, армянское вероисповедание, грузинское вероисповедание, мощи, святыня, св. Крест, монастырская традиция*

ARTSRUNI SAHAKYAN – ***The Sanctuaries of St. Sargis in Gag and Ushi***. – The issue of the origin and name of the sanctuary is considered on the example of the places of pilgrimage of Gaga and Ushi called St. Sargis. People's Christian saints may be drawn by the official church in the sphere of new inter-church and political relations, acquire new functions and new names, due to the corresponding "fragmentary" legends.

Thus, once St. Sign Gaga was replaced by St. Sargis, the patron saint of the Armenian military and captives, as well as the "controller" of the Armenian-Georgian confessional relations in the 11th-13th centuries. And in the XIII century on the basis of the monastic folklore tradition of Gaga St. Sargis the legend of St. Sargis Ushi was formed, in which, however, the sanctuary of St. Sargis Ushi is indicated as the original location of the sanctuary, a fragment of which was placed at the base of St. Sargis Gaga.

Key words: *St. Sargis, Gag, Ushi, belonging to the Armenian Apostolic faith, belonging to the Georgian orthodox faith, Relic, Sanctuary, St. Cross, monastic folklore, Gavazin (Guarzin)*

Ներկայացվել է՝ 17.05.2019

Գրախոսվել է՝ 29.05.2019

Ընդունվել է տպագրության՝ 27.06.2019